ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» հոկտեմբերի 2025թ. № 991

ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 98-Ա որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2002 թվականի օգոստոսի 30-ի թիվ 119 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 12 օրդերը և Սամվել Հովհաննեսի Դանիելյանի, Ալինա Ամիրբեկի Դարչինյանի, Լեյլա Սամվելի Դանիելյանի, Սիրամարգ Սամվելի Դանիելյանի և Վարսենիկ Սամվելի Դանիելյանի ներկայացուցիչ Ալվարդ Ամիրբեկի Դարչինյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03092025-06-0092 վկայական՝ տրված 03.09.2025 թվականին) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց 11/1 շենք, 8 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Սամվել Հովհաննեսի Դանիելյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

1) Սամվել Հովհաննեսի Դանիելյան - ինքը՝ ծնված 25.01.1955 թվականին,
2) Ալինա Ամիրբեկի Դարչինյան – կինը ծնված 25.03.1957 թվականին,
3) Լեյլա Սամվելի Դանիելյան – աղջիկը՝ ծնված 07.05.1979 թվականին,
4) Սիրամարգ Սամվելի Դանիելյան – աղջիկը՝ ծնված 09.12.1989թվականին,
5) Վարսենիկ Սամվելի Դանիելյան – աղջիկը՝ ծնված 14.04.1978 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Լուսինե Օհանյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 13
ք.Սպիտակ